Երիտասարդը քարշ տոեց մահճակալի տակից մի հին երկարաձեւ արկղ, ընկոյզի փայտից, որի բոլորտիքը գամած էին երկաթեայ փաթաթներով եւ պղնձեայ բեւեռներով:

— Այդ արկղի բանալին է, — ասաց նա: — Լուսահոգիի մեռնելուց յետոյ, աստոած է վկայ, մի անգամ էլ չեմ բաց արել, որ տեսնեմ, թէ ի՞նչ կայ դրա մէջ:

— Բոլորովին հաւատում եմ, — խօսեց պարոնը, մօտեցաւ արկղին, բացեց նրան:

Նա լի էր զանազան թղթերով, զանազան հաստ ու բարակ տետրակներով: Այդ ձեռագրերի մէջ կային զանազան սկսոած եւ չաւարտոած վէպեր. վէպիկներ, պատկերներ, կային զանազան բանաստեղծութիւններ, կային եւ բոլորովին վերջացրած աշխատութիւններ:

Բարձրահասակ տիկինը, որ բոլոր ժամանակը խորին տխրութեամբ նայում էր այդ մռայլ խուցի սրտատոչոր պարագայքին, երբ տեսաւ արկղի մէջ խառնիխուռն կերպով ածած թղթերը, նրա նեղ, երկնագոյն աչքերը լցոեցան արտասուքով: Դրանք հայոց մի անբախտ բանաստեղծի աշխատութիւններն էին: Նա դողդոջուն ձեռքը տարաւ, վեր առեց տետրակներից մէկը, որպէս մի սրբութիւն, եւ երկար յառած նայում էր նրա վրայ, թէեւ կարդալ չէր իմանում: Այդ միջոցին ներս մտան մանուկները:

— Հայրիկ, — ձայն տոեց փոքրիկ Անոյշը, — դու մեզ ասացիր, երբ կը գնանք Հայաստան, ձեզ հայերէն կը սովորացնեմ. տուր մեզ մի-մի հատ այդ տետրակներից, որ սովորենք:

— Երբ կտպոին, այն ժամանակ կը կարդաք, զաւակս, — պատասխանեց հայրը:

— Արդեօք կտպոի՞ն... — հարցրեց տիկինը:

— Կտպոին...

Երիտասարդ Ռաշիդը պատմեց, թէ վերջին գիշերը, երբ պիտի մեռնէր «լուսահոգինէ, նա հրամայեց վառարանը վառել: «Պէտք է մաքրել այդ թղթերը»... ասաց նա: — Ես դրեցի արկղը նրա մօտ, նա ջոկում էր թղթերը եւ շատերը նետում էր կրակի մէջ: Բայց դեռ այդ գործը չվերջացրած, նա մեռաւ: Վերջին գիրքը դեռ բոլորովին չէր այրոած, ես դուրս բերեցի կրակից, դրեցի միւսների հետ եւ արկղը կողպեցի: Դրանով իմ հոգուն մեղք արեցի. նա կամենում էր այրել, ես չթողեցի: Ո՞վ է իմանում, կարելի է մի բան պէտք կը գայ: Լուսահոգին վատ բան չէր գրի: Ա՜խ, որքա՜ն գրում էր... կարծես իմանում էր, որ շատ չի ապրի...